

ՕՐԱԹԵՐՁ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

ԺՈՂՈՎՐԴ

119
(2599)12 օգոստոսի ուրբաթ 2022
տպագրության ժամ տարի

✉ ք. Երևան, Կրոնյան 22ա/3 (0010) ☎ + 374 10 546423

✉ info.armlur@gmail.com, info.zhovhovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈԼ ՓԱԾԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 67

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ



2016-ի հուլիսի 6-ին ընդումադիր պատգամավոր Նիկոլ Փաշինյանը, հյուղնկավելով լրատվամիջոցներից մեջին, խոսում էր իրենց՝ նոր-նոր հիմնադրած կուսակցության՝ «Քաղաքացիական պայմանագրի» գաղափարախոսության ու կուսակցականների արժեհամակարգի մասին։ Ըստ նրա՝ հայ ժողովուրդը պետք է անի անհնարին պատմության 1000-ամյա ցիկլից դորս գալու համար, իսկ ՀՀ-ի ու Արցախի տարածքը կենսական տարածք է։ «Մեր խնդիրը հետեւյալն է՝ ո՞րն է մեր պատմության ցիկլը։ Գալս է ժամանակ, որ աշխարհաքաղաքական իրավիճակից ելելով՝ ունենում ենք պետականություն, բայց հետո, երբ աշխարհաքաղաքական իրավիճակը փոխվում է, պարզվում է՝ ինարավորություն չունենաք պետականություն ունենալու։ Ե՛, բայց ես համաձայն չեմ դրա հետ, - հարցազրուցի ժամանակ ասում է նա ու ընդգծում։ Հայ ժողովուրդը երկրից հեռացումը, կերպեք, փախուստը պետք է դադարեցվի, ու մեր քաղաքական գործունեությունը դա կանխելու դեմ է ուղղված լինելու։ Այսօր հոդ հանձնելու մասին մենք չենք մտածում։ Այսօրվա քաղաքական էլիտան մեզ տանում է պետականության կորստի ճանապարհով։»

Նիկոլ Փաշինյանն այդ հարցազրուցի ժամանակ խոսում է նաեւ քառորյա պատերազմի հանգամանքների, թերացումների, ոչ ճիշտ կառավարման ու պատերազմի հետ կապված այլ թեմաների մասին՝ ամենասուր ձեռվագ քննադատելով այն բացերը, որ գուցե խևապես եղել են այդ օրերին։

Մեր օրերի իրականությունը, սակայն, այն է, որ 2020-ի 44-օրյա պատրազմից հետո ՀՀ-ն ոչ միայն դրուս չի եկել Փաշինյանի ասած «պատմության 1000-ամյա ցիկլից», այլ նոր ցիկլի մեջ է ընկել, որտեղ հակառակորդը պարբերաբար խախտում է պետական սահմանն ու տնավորվում մեր հողերում։ Նոյեմբերի 9-ի հայտարարությունից հետո, ցավիք, ոչ միայն հոդեր են հանձնվել, այլ նաեւ խախտվել է Արցախի Հանրապետության ամբողջականությունը, ավելին՝ ՀՀ-ի տարածքի, օրինակ՝ Երևան-Կապան ավտոճանապարհի մի հատվածը՝ 21 կմ, Աղբերձանին է անցել։

Փաշինյանի՝ հոդ չի անձնելու, «ապամանական 100-ամյա ցիկլի» դեմ պարագաները ու հայրենասիրության մասին խոհափիլխոփայական հայտարարությունները սուտ են եղել։

2 019 թվականին հիմնադրված բանակի կենտրոնական մարզական ակումբում չևայած որ պետք է խաղան ֆուտբոլիստ-գինծառայողները, սակայն տարեկան են։ Այս խայտառաջնության առիջով մեկնաբանության համար «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց բանակի կենտրոնական մարզական ակումբը տնօրեն Գագիկ Աղբայանին՝ հասկանուի համար, թե ինչու է նաման իրավիճակ ստեղծվել։ Վերջինս նշեց. «Այժմ ունենք երկու ակումբ, որից մեկը խաղում է Պրեմիեր լիգայում, մյուսը՝ Աղաջին խմբում։ Եղիու ակումբների համար անհրաժեշտ է 50-ից ավելի ֆուտբոլիստ, սակայն, այն է, որ 2020-ի 44-օրյա պատրազմից հետո ՀՀ-ն ոչ միայն դրուս չի եկել Փաշինյանի ասած «պատմության 1000-ամյա ցիկլից», այլ նոր ցիկլի մեջ է ընկել, որտեղ հակառակորդը պարբերաբար խախտում է պետական սահմանն ու տնավորվում մեր հողերում։ Նոյեմբերի 9-ի հայտարարությունից հետո, ցավիք, ոչ միայն հոդեր են հանձնվել, այլ նաեւ խախտվել է Արցախի Հանրապետության ամբողջականությունը, ավելին՝ ՀՀ-ի տարածքի, օրինակ՝ Երևան-Կապան ավտոճանապարհի մի հատվածը՝ 21 կմ, Աղբերձանին է անցել։



«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ քաղաքացի Վրեժ Յակոբյանին մեղադրանք է առաջարկվել այն բանի համար, որ նա քաղաքացի Արա Վարդգեսի թաթույանի, Վերջինիս եղբայր Կրտակ Վարդգեսի թաթույանի եւ «Արդինբանկ» ՓԲԸ-ի Վերջու մասնաճյուղի ուսկերի Պավել Մանուկյանի հետ կազմակերպված խմբով 2017թ. մարտ 30-ից մինչեւ 2018թ. գետնվարի 20-ը բանկից խարդախությամբ հափշտակել են առանձնապես խոշոր չափությունուն գումար։ Ըստ նախաքննների մարմնի՝ խոսքը պարզապես պատճենագույն է այլ մետաղներից պատրաստված կեղծ ուլյա ծուլակորներուն ու զարդերուն որպես ուսի տարբեր անձանց անուններով գրավ է դրել «Արդինբանկ» ՓԲԸ-ի Վերջու մասնաճյուղում։ Ուսկերիչ Պավելիկ Մանուկյանը են եւ տեղյակ ու մասնակից է եղել կեց ուլյա պատրաստված իրերը որպես ուսկյա զարդ բանական գումար։ Միայն այս գումարը կազմում է 276 մլրդ. ընդհանուր 276 մլրդ. 159 մլն 703 հազար ՀՀ դրամ գումար, որը խարդախությամբ հափշտակվել է։ Այս գործով ընդունված արդինական է ։ Ի դեպ, ArmLur.am-ը հուլիսի 28-ին գրել էր, որ «Արդինբանկ»-ի հաշվապահները, գանձապահը, կառավարիչը հափշտակություն են արել, քանի որ 35 քաղաքացու ույլա իրեր դրուս էին բերել բանկից եւ յուրացրել։ Կարծ ասած, «Արդինբանկ»-ում ուկու գրավադրմամբ վարչ վերցնել ինստ ուսկային է, գուց թեզ պետք կտրու վերադարձնես ույլա զարդերի փոխարեն կամ վերցնես ուսկերին ու պարզապես անհետանան։



3 այսամսանում սպառողական զամբյուր ամսական կտրվածքով բավականին թանկացել է։ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նվազագույն սպառողական զամբյուրի արժեքը, այս տարվա երկորոր եռամսյակի միջին ընթացիկ գներով, կազմել է 82 հազար 198 դրամ ամսական կտրվածքով, մինչդեռ այս տարվա առաջին եռամսյակի միջին ընթացիկ գներով՝ սպառողական զամբյուրով կազմել էր 76 հազար 299 դրամ ամսական կտրվածքով։ Պահենային զամբյուրի արժեքը կազմել է 44 հազար 431 դրամ ամսական կտրվածքով։ «Ժողովուրդ» օրաթերթը հաշվարկեց, թե որքան են կազմում առաջին անդամությունուն սպառողականի գումարը ։ Օրինակ՝ ըստ Վիճակագրական կոմիտեի՝ մեջ ամսում սպառված սննդամթերքի արժեքը՝ 1 մեծահամակի հաշվով, կազմել է ընդհանուր 44 հազար 431 դրամ։ Այս գումարին համարժեք ցանկություն ներառված է նաև անդամությունուն սպառողականի համարժեքը։ Օրինակ՝ օրական փաստացի սպառումը՝ 1 շնչի հաշվով, 461 գրամ կազմել է հացամթերքը, 48.3 գրամ կազմել է մսամթերքը, 18.6 գրամ ձու եւ այլն։ Տավարի միի 100 գրամը երեւանյան սուպերմարկետներում, խանութերում գերազանցում է 330-400 դրամը, ձևամթերքի՝ «Եշխան» ծեսատեսակի 100 գրամը պահանջմանը բան 300 դրամ է կազմում, երկու հատ ծով մինչեւ 80 դրամ է, իսկ, ահա, 90-100 գրամ հացը սկսում է 150 դրամից։ Սրան զուգահեռ նվազագույն աշխատավարձը՝ 68 հազար դրամ է, այս դեպքում մարդիկ անգամ սևդի այդ սպառագույն չափությունը կարող են գումարությունը բերել։ Ստացվում է, որ սպառողական զամբյուրուն արժեքը գերազանցում է նվազագույն չափությունը ։



ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ է

ԱՅՍՈՐ ՀԱՊԱՂՈՒՄՆ ԱԿԵՐԱՅՅՆ Է

Ազգային ժողովի նախակին դատագամավոր, իրավաբան Տարն Սիմոնյանն անթույլատելի է համարում, որ հայկական կողմը միազգային իրավունքին այս չափ անընդ կամ հարեւանցի է վերաբերվում: Հս նաև՝ միջազգային հարակիներում ու դատարաններում մի շարք գործիքներ կան, որոնցով կարելի է դայնարել թե՛ դատերազմի հետևանքով տուժած մարդու իրավունքների, թե՛ առհասարակ դեմոքրատ համար: Իրավաբանի համոզմամբ՝ միջազգային իրավունքից բխող դրույթները մենք հավուր դատապահ չենք կիրառում:

-Հայաստան ու Արցախը լուր, առաջ որեւէ դիմադրության պատրաստված են հերթական զիշմանը: Այս անզամ խոսքը Բերձորի, Սուս ու Աղավնո գյուղերի մասին է: Ի դեպ, դիմադրությունը միայն գենքով պաշտպանությանը չի վերաբերում, այլ դիվանագիտությանը ու Նորմերին, որոնց կարող էինք հղում անել: Միշագգային հարթակներում հնարավի՞ն է կրիկ տալ օրենքի ու դիմանահողության լեզուն:

-Այս, ճիշտ եք ասում, որ առանց դիմադրության հավաքում
հերթական զիջումն է տեղի ունենալ, եւ աս այս խայտառակ զիջումն է, որ
պատմության առաջ պետք է պատասխան
տան ոչ միայն առանձին անհատներ, այլ
ամբողջ ժողովրդով: Մեր համրությունն այս
ամենն ըստունում է նույնկերպ, ինչպես
հարյուրավոր տարիներ առաջ մեր հոդերի
մեծ մասը զիջմեց թուրքական պետություն-
Ներին: Դրա պատճառն այն է, որ շատերը
պատրաստ չեն իրենց կյանքի գնով
պաշտպանել հայութին հողը: Բացի գենքի
ուժով կիսնիր լուծելուց, ճիշտ նշեցիք, դի-
վանագիտական եւ իրավական հարթակս-
րում եւս աշխատանք չի տարվել: Ոչ միայն
հնարավոր է այդ աշխատանքը տանել, այլ
պարտադիր է այդ ամենը անել, որովհետո
ցանկացած ազգային հոդի հետ կապված
շահ առաջ տանելու համար բոլոր գործիք-
ները, գենքերը պետք է օգտագործենք՝ դա
կիլինի մարտի դաշտում, թե դիվանագիտա-
կան ու իրավական դաշտերում: Տարիներ
շարունակ այս դիվանագիտությունը չի օգ-
տագործվել եւ հիմա էլ չի օգտագործվում:
Ճատ անգամ նշել եմ, թե ինչպես դրանք



օգտագործել մենք ունենք դատական, իրավական գործընթացներ սկսելու լայն հնարավիրություններ, 5-7 կոնվենցիա այս պահին, որումք վավերացված են Յայաստանի եւ Ադրբեջանի կողմից, որոնց շրջանակներում կարող են դատական գործընթաց սկսել: Դիվանագիտական հարթակներում երբ որ բարձրածայսի էթնիկ գոտումների առկա վլանգը, միջազգային հանուլթյան գործընկերությունները եւ միջազգային կազմակերպություններ ինչ-որ կերպ դրան կարծագանքեն: Պետք չէ 1-2 փորձից հրաժարվել դիվանագիտական հարթակները արդյունավետ օգտագործելուց:

-2018-ից հետո Յայտատակը պատերազմի ոճրագործությունների մասով դիմել է Եվլողական ասյաններ, բայց մեր ունեցած գորսցներում մեկ անգամ չէ, որ փաստել են մի շաբթ դրվագներով ու նորմերով հայկական կողմը հապաղել է: Մեր բարձրածայլում որևէ ազդեցություն թողել են, թե՞ ամեն բան շարունակում է մնալ այնպիս, ինչպես կար:

-Մենք դիմել ենք տարբեր հարթակներ, այդ թվում՝ նաև դատական ասյաններ, ինտրու ենք, որ գործիքակազմ օգտագործվի Ադրբեյջանի զապելու համար: Յայկական կողմը արդյունավետորեն չի օգտագործում միջազգային հարթակները, եւ դա նոր բան չէ: 2018թ.-ից այս կողմ էլ եւ դրանից առաջ էլ չի եղել, եւ պատճառները եղել են տարբեր: Այսօր հապաղում ակխայտ է, իսկ թե ազդեցություն թողել են մեր բարձրածայլում որևէ հատկապես ԶԼՍ-ներով, ապա շատ ժամկետու:

- Ի տարբերություն մեզ՝ օրինակ՝ միջազգային ահարձեկչությունների կազմակերպման կամ հրահրման մասով ինչ է արել Աղքադեշանը, Նրանք ինչպես են աշխատում այս ֆրոնտում:

-Աղբերձանը միջազգային ահարեւէցության կազմակերպման եւ հրահրման մասով իր աշխատանքները կատարել է դեռևս արցախյան պատերազմից սկսած Երբ որ նա վարձկաններ էր բերում եւ մարտ տի էր հանում ընդդեմ հայկական ուժերի կողմէ Նրանց գումար էր տալիս, դրանով իսկ իրանում է ահարեւէցության տարածումը որովհետո դա շահագրգում է այլ ահարեւէցիների՝ որպես վարձկան գունչը լու եւ վարձկանական ծառայություններ մատուցելու: Կապ չունի՞ դու որտեղ ես վճարում վարձկանին, այդ արարքով ամբողջությամբ նպաստում ես միջազգային ահարեւէցության տարածմանը: Վաղ թէ ուշ Նրանք այդ գումարի դիմաց մատուցած ծառայությունները կվիրառեն մեկ այլ պետություններում: Աղբերձանի շանքերով ահարեւէցությունը ոչ թէ նվազում է, այլ ավելանում է:

-Ծատերն այս տեսակետին են, որ միջազգային հարթակներում երեք անգամ գրոթված ակտերինք, ապա դա որեւէ արդյունք չէ տա, ու Աղրթեշան ուժով կիամեր ի նապահաներին:

- Ծառ եւ լսել, որ քաղաքական գործիչները, որոնք որ դիվանագիտական եւ իրավագիտական գիտելիքներից կաղում եւ փորձում են դիվանագիտական հարթակներում գործ չըկատ՝ պատճառաբանելով, որ արդյունք չեն տալիս: Չեն զբաղվում միայն շագագիր իրավունքներով, այլ գնում են զբաղվում են այլ մասնավոր իրավունքներով, եւ այդ ռեսուրսը կորչըս է: Հոյսում դնում են մեր գործնկերների վրա, ինչը ընկանաբար, արդյունք չտվեց, դրա համար մեզամից կախված ամեն ինչ պետք անենք, եթե անգամ կասկածում ենք, որ ապագայում արդյունք չի տալիս: Զօգտական գործել մեր ռեսուրսները ոչ մի կերպով չկարող արդարացվել, հատկապես որ մեր գալիք սերունդը այդ հարցը պետք է տալիս: «Եթե դուք ունեցել եք այդ լծակները, ինչո՞ւ եք օգտագործե՞ն»:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄԱՆ

ԳՈՒՄԱՐ
ԿՐԱՏԿԱՑՎԻ



ՀՅ կառավարությունը Սահմանադրական դատարանին գումար է հատկացնելու: Խոսքը 42 մլn 700 հազար դրամի մասին է: Armlur.am-ին հայտնի դարձավ, որ հուլիսի 10-ից Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի եւ դատավորի համար սահմանվել է հավելավճար՝ պաշտոնային դրույթաչափի 80 տոկոսի չափով:

Մինչեւ հովհակի 10-ը գործող օրենսդրության համաձայն՝ Սահմանադրական դատարանի նախագահին եւ անդամներին դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժի համար վճարվել է հավելավճար՝ յուրաքանչյուր տարվա համար 2 տոկոսի չափով, որի ընդհանուր չափը չեղ կարող գերազանցել հինական աշխատավարձի 30 տոկոսը։ Փաստորեն, կառավարությունը որոշել է բարձրացնել հավելավճարի չափը՝ չնայած այս հանգամանքին, որ ՍԴ են նախագահը, են փոխնախագահը բավականին բարձր աշխատավարձ են ստանում։

COVID-19-ԻՑ
ՄԱՐԱՏԵԼ Է
687 ՄԱՐԴ

Հայաստանում այս տարվա վեց ամիսներին Covid-19-ից մահացել է 687 մարդ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կորոնավիրուսը 2185 մարդու կյանք է խլել: Մեկ տարվա ընթացքում զգայի պակասել է մահացածների թիվը: ՀՅ վիճակագրական կոստիտեն հրապարակել է մահվան հիմնական պատճառների ցանկը: Բնականաբար, մահվան հիմնական պատճառների ցանկի առաջին հորիզոնականում արյան շրջանառության համակարգի հիվանդություններն են, որից մահացել է 8102 մարդ: Մահվան ամենատարածված պատճառներից հաջորդը օնկոլոգիական հիվանդություններն են, որոնց մեջ գերակշռում են չարորակները: Հայաստանում նորագոյացություններից անցած տարվա հունվար-հունիս ամսիններին մահացել է 2652 մարդ, իսկ այս տարվա 6 ամսիններին այս ցուցանիշը փոքր-ինչ նվազել է՝ դառնալով 2573: Ճիշտ է, այս ցուցանիշը 3 տոկոսով պակասել է մեկ տարվա ընթացքում, բայց, միեւնույն է, այս հիվանդությունը շարունակում է մահվան պատճառների առաջատարը մնալ: Սասանգետների խոսքերով՝ նորագոյացություններից եւ սիրտ-անոթային համակարգի հիվանդություններից մահացածությունը պավանդաբար կազմել է մահերի միտավորապես 70 տոկոսը: Բացի այս, նկատենք, որ շնչառական օրգանների հիվանդություններից մահացել է 1356 մարդ, այս ցուցանիշն աճել է 8.1 տոկոսով: Դժբախտ պատահարներից, թունավորումներից մեր հանրապետությունում այս տարվա վեց ամսիններին մահացել է 461 մարդ:

ՊԱՐԱՆՁ՝ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

ԲԱՆԱԿՑԵ՞Լ Է ՐԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՀՐԱՄԱՆԵԼՈՒ ԸՆԴՐԸ

ԱՌ մարդու իրավունքների ռահըմանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Նիկոլ Փաշինյանի իշխանությունը հայրենագրկան հոմանիք է դարձել մեզ համար. կը սր-կը սր կորցնում եմ մեր հարեւնիքը»:



հատվածների (այդ թվում ծնառատ սարդի) Ակատումամբ եւս մեկ անգամ փաստում է՝ Արցախը ամենաէին էլ արժեք չէ այս մարդկանց համար: Նրանք տարանշատեցին մեր երկու պետությունները...
Գորություն եմ ուղարկել Ն. Փաշինյանի՝

ինչ արդյունքներ են արձանագրվել: Եթե վաղուց հայտնի էր, որ այդ ընակավայրերը պիտի հանձնվեն, ինչո՞ւ ժամանակին նախայատրատական աշխատանքներ չեն իրականացվել, այլ, ընդհակառակը, տարբեր միջոցներով ներդրումներ են արվել այս համայնքներում: Մեկ այլ ինսիդր է նաեւ պատմամշակութային ժառանգության պահպանման հարցը՝ առ այն, թե արդյոյն դր կառավարությունը ձեռք է բերել պայմանակիրվածություն, որ ադրբեջանական վայրագիւնքը չեն վսասի նշված համայնքների պատմամշակութային ժառանգությունը գործադրություն:

ԹԱՆԱՊԱՐԱԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՔՆԵԱՐԿՈՒՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱԻՆ

ԿԱՐԳԱՊԱՐԱԿԱՆ ՏՈՒՅՖ

Ուշագրավ զարգացումներ՝ օֆշորի հայտնի գործող դատախազ Դավիթ Վեքիյանի կողմից գլխավոր դատախազ Արթուր Դավթյանին դատի տարու գործնաբացից: ArmLur.am-ին հայտնի էր դարձել, որ դատախազ Վեքիյանը ապրիլի 19-ին դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով, որ դատարանը ստիպի դատախազությանը ՀՀ գլխավոր դատախազի՝ 15 ապրիլի 2022 թվականի «Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Դավիթ Վեքիյանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին» որոշումը եւ ՀՀ գլխավոր դատախազի՝ 15 ապրիլի 2022 թվականի «Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Դավիթ Վեքիյանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին» փոխադրելու եւ ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազի պաշտոնում նշանակելու մասին» հրամանը վերացվել: Կրոյունքում դատարանը պահանջել է դատախազ Դավթյանից երկշաբաթյա ժամկետում դատարան ներկայացնել 15.04.2022 թվականի «Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Դավիթ Վեքիյանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին» որոշումը եւ 15.04.2022 թվականի «Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Դավիթ Վեքիյանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին» դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազի պաշտոնում նշանակելու մասին» թիվ 22 հրամանն ընդունելու համար հիմք հանդիսացն նութեք:

ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

Ապարանի կրակոցներից մեկ ամիս անց եւ կրակոցների հետեւանքով օրեր՝ երրորդ անձի մահվանից հետո, Արագածոտնի քննչականի պետին ազատեցին պաշտոնից: Դատելով իրավիճակից՝ Նրան այլ պաշտոնի տեղափոխեցին, որ-պեսզի ազատումը չկապէն այստեղ մեկ ամիս առաջ տեղի ունեցած աղմկահարույց կրակոցների եւ դրա հետեւանքով երեք անձի սպանության դեպքի հետ: Օգոստոսի 8-ին կոմիտեն պաշտոնապես հյատեց, որ, Քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի հրամանով, ՍամՎէլ Սիմոնյանը Նշանակվել է Քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետ՝ ազատվելով Արագածոտնի մարզային քննչական վարչության պետի պաշտոնից, իսկ Հովիկ Խաչատրյանը Նշանակվել է Քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության պետի պաշտոնից: Տապահությունն այնպիսին է, որ ստվիրական աշխատանքային տեղափոխություններ են, սակայն իրավիճակը մարզում շարունակում է լարված մասը, եւ այս ֆոնին իրավապահները փոփոխություններ են անում, նոր կադրեր Նշանակում այդ քայլով փորձելով վերահսկել իրադրությունը: Ի դեպ, այս աղմկահարույց սպանությունից երեք օր հետո, ոստիկանապես Վահե Ղազարյանի հրամանով, աշխատանքից ազատվել եւ ոստիկանության կադրերի տրամադրության տակ է անցել ոստիկանության Ապարանի բաժնի պետ Աշոտ Յանապահության:

Կառավարությունը որոշում է ընդունել «ՀՀ 2022 թ. դեչական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություններ եւ լրացումներ, կառավարության 2021թ. դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու եւ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը գումար հաշկացնելու մասին:

ՏԿԵ Նախարար ԳԱԵԼ Սանոսյանի գելկուցմամբ՝ առաջարկվում է հատկացվելիք գումարով 3 ճանապարհատվածում իրականացնել կամ ավարտել շինարարութական աշխատանքները։ Դրանցից մեկը Լոռու մարզում է՝ Ստեփանավան-Յաղդան կոչվող հատվածում։ 8.1 կմ ճանապարհից այս տարի կտրողվի 6 կմ-ը, 2 կմ ասֆալտապատումը կարվի հաջորդ տարի, մյուսը՝ Սիսիան-Դաստակերտ (Դաստակերտ, Տորունիք, Տոլորս) հասվածն է, եւ երրորդը՝ Տաթեւ-Աղվանի հայտնի ճանապարհահատվածի մեկ կտրորը՝ 17.5 կմ։ Նախարարը նշել է, որ վերջին ճանապարհահատվածում առաջեկած թերությունները վերացվել են, այժմ վերին շերտն է տեղադրվում։ Նախատեսված է 2 մլրդ 734 մլն ՀՀ դրամ գումար, որից 2 մլրդ 689 մլն ՀՀ դրամը՝ շինարարության համար է, 25 մլն ՀՀ դրամը՝ տեխնիկական հսկողության, 19 մլն ՀՀ դրամը՝ հեղինակային հսկողության։

ՏԿԵ Նախարարը գեկուցել է, որ այժմ 500 մետրից էլ պակաս ճանապարհահատված է մասցել, եւ հավանաբար վաղին այդ հատվածում այլեւս փոսեր չեն լինի, այն ամբողջովին ասֆալտածածկ կլինի: Ակսվել է երրորդ շերտի տեղադրման գործընթացը. 5.8 կմ արդեն տեղադրվել է, աշխատանքը շարունակվում է: Վարչապետի հարցադրմանն ի պատասխան, թե արդյոք շտկումներից հետո այդ ճանապարհը կվարողանա նաև բեռնատար մեքենաներ սպասարկել, Գ. Սանոսյանը նշել է, որ գործնականում, այս, որոշ տեղերում խնդիրների քիչ հավանականություն կա, բայց կշերքների համակարգի պատշաճ կիրառման դեպքում ճանապարհը կարդարացնի իրեն, քանի որ այն շարքից դուրս եր եկել՝ Կապան-Երևան ուղղությամբ ծանրաբեռնված մեքենաների երթեւեկությամբ պայմանավորված:

Կառավարության ներկայացր խնդրահարուց է համարել՝ Նշելով, որ պետական բյուջեի ծախսային հատվածը վերլուծելի կաջիտալ ծախսերում տեսնում ենք թույլատրությունը. Եւ աետո է հասկանա.

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ ԳՈՐԾՈՎ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Երեկ Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը՝նախագահությամբ դատավոր Մասցական Մարտիրոսյանի, ՀՀ նախարարին գլխավոր դատախազ, Զննչական կոմիտեի նախարարին նախագահ Աղվան Հովհաննեսի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը 100 միլիոն դրամ գործիք դիմաց ազատ արձակելու մասին որոշում նաևագործական:

ԵՐԿԱՌԱՋՄ ԿԱՊԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազդուց է ունեցել Իրանի հվամական Հանրապետության նախագահ Աբեդի



որ այստեղ միայն Կառավարությունը չէ, որովհետեւ, ըստ Էռլիշան, կապիտալ ծախսերն ամբողջությամբ իրականացնող մասնավոր հատվածն է: «Մենք պետական շինարարական կազմակերպություն չունենք: Ըստ որում այդ գայտնոտային նարկումը կրա համար է, որ այդ ոլորտի նաեւ օտարերկյա ընկերությունները, պոտենցիալ ներդրողներն իմանան, որ հւկայական դաշտ ունենք, որտեղ հնարավոր է աշխատել: Սա կարեւոր առանձնահատկություն է եւ կարեւոր ուղերձ:

շնորհածք։ Եսու որպես այդ ցանցութեայի և իրավիճակներն ազդում են նաեւ որպակի վրա, որովհետեւ, մի կողմից, պարտադրում ենք, որ ժամանակի մեջ մնա, եւ եթե ինքը ճիշտ ժամանակացույցով չի աշխատում, նաեւ որպակի հետագա խնդիրներ ենք ուսենում։ Քանի նման դեպք ենք ուսեցել, երբ պարզվել է, որ շատ լուրջ ծրագրերի հետ կապված որպակի խնդիր կա։ Եվ, ընդհանրապես, ճանապարհաշինական սպառնապորի հետ խասակած ին-

սակագ անատարախոյի հւետ զապված խո-
դիր ունենք: Բայց, մյուս կողմից էլ, չենք
կարող ասել՝ ամբողջ երկրում շինարա-
րությունը դադարեցնում ենք, մինչեւ
ստանդարտ ունենանք, որովհետեւ
ստանդարտը մեկ հարց է, դրան համա-
պատասխանող ընկերություն ունենալը՝
մեն առ հարց: Այս հոգագործակի ըն-

թեսարկել են տարածաշրջանային գաղ-
գացումներին եւ անվտանգային մար-
տահրավերներին վերաբերող հարցեր։
Կողմերը մտքեր են փոխանակել նաև
երկրորդ կապերի շուրջ, ընդգծել դրանց
սերտացման կարեւորությունը։ Մեյեր Էր-
րահիմ Ռայխին պատմական ու խորը է
որակել երկու երկրների փոխհարաբերու-
թյունները եւ ընդգծել հայ-իրանական կա-
յուն տնտեսական համագործակցության
մակարդակի բարձրացման անհրաժեշ-
տությունը։

ԼԱՂԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԻ ՀԱՐՑԸ

Լաշինի միջանցքի հարցը պետք է որոշվի Ռուսաստանի, Յայաստանի և Աղբյությանի առաջնորդների՝ 2020 թվականի նոյեմբերի 9-ի երեսում՝ հայուսարարության 6-

բդ. կետի հիման վրա. այս մասին հայտարարել է ՌԴ ԱԳՆ տեղեկատվության Եւ տպագրության դեպարտամենտի տնօրենի տեղակալ Իվան Նետան:

Նրա խսքով՝ վերոնշյալ կետը ենթադրում է, որ կողմերի համաձայնությամբ առաջիկա երեք տարում կորոշվի Լաշինի միջանցքով և որ երթուղու կառուցման ծրագիրը, որը կապահովի կապը Լեռնային Ղարաբաղի եւ Յայաստանի միջեւ՝ այդ երթուղու պահպանման համար ռուսական խաղաղապահ գործախմբի հետագա վե-

բատեղակյամարք:
«Տարածաշրջանում իրավիճակը մնում
է Ռուսաստանի ուշադրության կենտրո-
նում», -ասել է նա: Նեչաւելու հիշեցրել է, որ
օգոստոսի 4-ին ՌԴ ԱԳՆ-Ն Լեռնային Ղա-
րաբաղի հակամարտության գոտում իրա-
վիճակի պոման կապակցությամբ հայտա-
րարություն է տարածել՝ կողմերին կոչ
անելով զսպակածություն ցուցաբերել եւ
ասելով՝ հայուսապի թժիկ:

ՀԱՅՏԱԲԵՐՎԵԼ Է

ՀԱՓԵՏԱԿԵԼ Է ԽՈՇՈՔ ԳՈՒՄԱՔ

ՀՀ բննշական կոմիտեի Արմավիրի մարզպահին բննշական վարչության Վահագաղատահայտությունը բաժնում ավարտվել է ավանդատուի՝ առանձնադրեն խուսու չափերով գումարները խարդախությամբ հափետակելու դեղիքի առքիվ դեռևս 2015թ. հոկտեմբերին հարուցված բենական գործից անջակա մասով նախաբնանությունը, որի շրջանակներում որդեն մեղադրյալ է ներգրավվել Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերից մեկի ֆինանսական խորհրդառուն, ում նկատմամբ հայտարարվել է հետախուզում, իսկ 2016թ. փետրվար ամսին բենական գործի վարույթը կասեցվել է՝ մեղադրյալի գտնվելու վայրը դարձված շիներու և բննությունից բանվելու հիմունքով:

Նախաքննության ընթացքում ձեռնարկված անհրաժեշտ քննչական գործողությունների արդյունքում 2021թ. մեղադրյալը հայտնաբերվել, ներկայացվել է վարույթը իրականացնող մարմնին, եւ քրեական գործով վարույթը վերսկսվել է: Քննությամբ ձեռք բերված ապացույցներով պարզվել է իմանավորվելու հայտնաբերությունը, 2013-2015թ. աշխատելով բանկերից մեկի էջմիածնի մասնաճյուղում որպես ֆինանսական խորհրդատու, խարդախությամբ հափշտակել է համաքաղաքացու կողմից բանկի մասնաճյուղում որպես ավանդատու մերդու վագոնավոր գումար: Մասնավորապես՝ ավանդատուն 2010թ. սեպտեմբերին նշված մասնաճյուղում մեկ տարի ժամկետով ներդուել է 50.000 եվրո գումարի չափով ավանդ, որից հետո բանկայել է հանրապետությունից եւ 2011թ. սեպտեմբերին բանկ չի ներկայացել: Բանկի աշխատակիցը ըստ օգոստի 1-ին հանգամանքից հաջորդել է հափշտակել բանկացու ավանդի գումարը:

Նկատի ունենալով այս հանգամանքը, որ միայնակ չի կարող հանել իր նապատակին, բանկի աշխատակիցը, գործով չափարակած անձանց հետ նախական համաձայնությամբ, մշակել է իրականացնել է խարեւության եղանակով նշված ավանդը հափշտակելու ծրագիր:

Այսպես, ավանդատուի բանկայության պայմաններում վերակերտ է ավանդի պայմանագիրը, որից հետո՝ 2014թ. սեպտեմբերին՝ ավանդի հերթական մար-



ման օրը ավանդը չի երկարացրել, այլ մարել է երկու կետով՝ 29.588.99 եվրո գումարը փոխանցել է հաճախորդի քարտային հաշվին, իսկ 30.000 եվրո գումարը՝ հաճախորդի արտաքությաին հաշվին:

Այսուհետեւ հաճախորդի անունից ներկայացրել է կեղծ բովանդակությամբ՝ բանկի աշխատակիցին, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով եւ 325-րդ հոդվածի 1-ին մասով, մեղադրանքը է առաջարկվել: Ղատարանը բավարարել է կրա նկատմամբ ավելի վաղ ընտրված խափանման միջոց կալանավորումը հաստատելու վերաբերյալ միջնորդությունը:

Վերջինիս վերաբերյալ մասն անջատվել է առանձին վարույթ, հայտարարվել նախաձեռնության պարուի մասին, եւ քրեական գործը՝ մեղադրական եղանակացությամբ, ուղարկվել է դատարան:

Խարդախությամբ առանձնապես խոշոր չափու հափշտակությանը մասնակից մյուս անձանց մասով նախաքննությունը շարունակվել է:

Թ.Ս.

Այսպիսի ավանդատուի բանկայության պայմաններում վերակերտ է ավանդի պայմանագիրը, որից հետո՝ 2014թ. սեպտեմբերին՝ ավանդի հերթական մար-

նշենք, որ ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գինավոր վարչության վեցերորդ կայազորյակին քննչական բաժնում իրականացվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ գինառաջայող էրիկ Արմենի Ղարսայանի մահվան բոլոր հանգամանքները պարզեցնելու համար:

Հաջորդ առաջային կոմիտեի գինվորական քննչական գինավոր վարչության վեցերորդ կայազորյակին քննչական բաժնում իրականացվում կայազորյակին գինառաջայող էրիկ Արմենի Ղարսայանը կայազոր վարչության վեցերորդ կայազորյակին քննչական բաժնում նախաճեռնվել է քրեական վարույթը:

Զննչական խումբը մեկնել է դեպքի վայր, կատարվում են անհետաձգելի եւ անհամատեղելի հրազենային մարմնական վնասվածքը ստացել է կրակային այլ գործողություններ:

ՈՐՆ Է ԽՆԴԻՐԸ

ՀԱՐՁԱՐՆՎՈՒՄ Է ՈՂՋ ԱՆԴԱԿԱԶՄ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ օգոստոսի 9-ին մահացած զինվորի բենական վարույթը հարցանվում են զորամասի ողջ անձնակազմը:

Դեպքը եղել է Տավուշի մարզի գորամասերից մեկում: Նախաքննության մարմնը ընտրելուն է տանում ինքնասապատվածության հասցելու հատկանիշներով: Զինվորը այդ ժամանակ եղել է մենակ, ուստի առաջմ նախաքննության մարմնը որեւէ կասկած չունի, թե նրան հասցել են այդ քայլին, ու նա ինքնասապան է եղել: Այս պահին քննիչները ստուգում են հանգամանքը՝ նրա այդ քայլը կապված է ծառայության հետ, թե անձնական ինդիքը:

● Հստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 10-ից 11-ը Յայաստանի Յանրապետությունում բացահայտվել է հանցագործության 51 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:

ԼՈՒՐԵՐ

ԱՎԵԼԱՆՈՒՄ ԵՆ ՉԵՐՔԱԿԱՎՈՒՄՆԵՐԸ



Armlur.am-ին հասած բացարիկ տեղեկությունների համաձայն՝ Խաչատրուուր Զոքորելյանի հայրիկի անետացման գործով ծերբակալվածների 20թան ավելանում է: Մեզ հասած լուրերու համաձայն՝ ծերբակալվածներից երկուուր գտնվում են Պարսկաստանում, եւ միջազգային կառույցների ու Իրանի հրավապահների շնորհիվ հնարավոր է եղել նրանց հայտնաբերել եւ ծերբակալել:

Ավելին՝ մեզ հասած լուրերի համաձայն՝ մեկ անձ կա արտերկորում ծերբակալված: Ասել է թե՝ գործով ոչ թե երեք անձ է ծերբակալվել, ինչպես հայտարարել էր Խաչատրուուր Զոքորելյանը:

Այսօր ԱԺ նախկին պատգամավոր Խաչատրուուր Զոքորելյանի հայրիկի անետանգման փաստով քիչ է՝ ծերբակալվել են ՀՅԴ գերագույն մարմնի անդամ, ԱԺ նախկին պատգամավոր Սուրեն Սահուկյանը եւ եւ երկու հանցակիցն, նոյն գործով կա եւ երկու ծերբակալված արտերկորում: Խաչատրուուր Զոքորելյանը մասնակիցն անդամները չեն ու դրանք անդամները չեն ու դրանք անդամները չեն անասել եւ որեւէ առնչություն երբեւ չեն ունեցել:

Հիշեցնենք՝ Armlur.am-ը գրել էր, որ Խաչատրուուր Զոքորելյանի հայրիկի անհուացման դեպքով քրեական վարույթը է հարուցվել ՀՅԴ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի՝ մեկ ուրիշին ապօհնարար կյանքից գրկելու հատկանիշներով, ասել է թե՝ սպանության հատկանիշներով: Զավելենք, որ, մեր տեղեկություններով, մյուս բոլոր ծերբակալվածները եւ են ՀՅԴ անդամներ եւ ունեցել:

ԱՐԳԵԼԱՓԱԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՅԻ

Օգոստոսի 10-ին ժամը 19:14-ին, Շիռակի մարզպահին ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Գյումրիի քաղաքի բաղադրի Երեւանյան խնուացման տեղի է ունեցել ճՏՊ, կա արգելափակված քաղաքացի:

Պարզվել է, որ Երեւանյան խնուացման թիվ 141 շենքի մոտակայքում բախվել են Օպել Astra G (վարորդ՝ Վ. Գ., ծնված 1967 թ.) եւ Honda Elysion (վարորդ՝ Ա. Ղ., ծնված 1980 թ.) մակնիշները, ինչի հետեւանքով Օպել Astra G մակնիշի ավտոմեքենայի վարորդը արգելափակվել է ավտոմեքենային:

Տուժածները հոսպիտալացվել են Գյումրու ԲԿ, որտեղ Ա. Ղ.-ն, ստանալով համապատասխան բուժօգնություն, դուրս է գրվել, իսկ Վ. Գ.-ի առողջապահ վիճակը գնահատվել է բավարար:

ՀԱՍՏԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԵԾ ԳՈՒՄԱՐՆԵՐ ԵՆ ՈՒԶՈՒՄ

ArmLur.am-ն ահազանգ ստացավ, որ Բերդորի ու Աղավնոյի բնակչութերի ուսեցվածքը տեղափոխելու համար բռնափոխադրող մի շաբթ ընկերություններ մեծ գումարներ են ուզում օգտվելով ստեղծված ծանր վիճակից:

ArmLur.am-ն փորձեց խոսել Արցախի կառավարությունից որեւէ մեկի հետ, սակայն մեր բոլոր զանգերը մնացին անպատճախան: Մեզ հաջողվեց կապ հաստատել Արցախի նախագահի մամուլի խոսնակ Լուսին Ավանեսյանի հետ եւ հետաքրքրվել, թե ինչու են Աղավնոյի եւ Բերդորի բնակչութերին թողել բախտի քմահաճուքին, ինչու չեն օգնում վերոհիշյալ հարցում:

Վերջինս ArmLur.am-ի հետ գրուցում, անդրադառնալով այս խնդրին, հայտարարեց. «Ինձ հավաստիացրել են, որ դրա մասին էլ են հոգ տարել. բնականաբար, անքարեխիղ մարդիկ կլինեն, որ կփորձեն այդ հրավիճակից օգտվել: Յամայքսապետերը տեղյակ են բեռնափոխադրումների հետ կապված խնդրություն դիմեր իրեւս: Յամայքսապետերը գիտեն, թե ինչ պետք է անեն: Ինչ որ գումարներ հատկացվել են այդ մարդկանց օգնելու համար, բայց կոնկրետ մեխանիզմը են զգիտեմ»:

ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Բագրատունյաց պոդ.-Արտաշիսյան փող. խաչմերուկի վերգետնյա հետիոտնային անցման ապամոնտաժման աշխատանքներով պայմանավորված՝ 1 ամսով փուլային տարբերակով փակ կլինի Բագրատունյաց պողոտայի անցմանը հարակից մեխական երթեւեկելի գոտի:

Գործընթացի առաջին փուլում կիակվի Բագրատունյաց պողոտայից Երեւանյան լիճ ուղղության 1-ին գոտին: Տրանսպորտային հոսքերի անցանելությունը կապահովվի 2-րդ եւ 3-րդ երթեւեկելի գոտիներով: Այլուհետ, 2-րդ գոտու փակման պարագայում երթեւեկությունը կիրականացվի 1-ին եւ 3-րդ գոտիներով, իսկ 3-րդ գոտու փակվելու դեպքում երթեւեկելի կլինեն 1-ին եւ 2-րդ գոտիներո: Նույն սկզբունքով վերգետնյա անցման ապամոնտաժման ընթացքում կիակվի հանդիպակաց ճանապարհը (Երեւանյան լճից Բագրատունյաց պողոտա եկող ուղղության մեխական երթեւեկելի գոտին):

Հետիոտնային անցումը Բագրատունյաց պողոտայի մի մայթից մյուսը ժամանակակիրապես կտեղափոխվի նոյն փողոցի՝ Բագրատունյաց պոդ-Զեխովի փողոցի՝ Բագրատունյաց պոդ-Զեխովի փողոցի հարակից հատված մինչեւ աշխատանքների ավարտ:

ԵՎՍ 6 ԿՄՍՈՎ

ՋԵՐՄԱՉԱՓԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՐԳԵԼՈ

ՀՀ տօջակա միջավայրի նախարարությունը առաջարկում է արգելել սննդիկի հավելիչով արտադրանքի եւ արտահանումը, եւ ներմուծումը: Այսինքն՝ ՀՀ տարածք չեն կարող մանել եւ այստեղից չեն կարող դուրս զալ այնուիսի արտանքներ, որոնք ունեն սննդիկ կամ սննդիկ դարձնանակող հավելիչներ:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ սննդիկի հավելիչով արտադրանքների Յայստանից արտահանման եւ ներմուծման արգելքը կսահմանվի վեց ամիս ժամկետով: Այսինքն՝ այս որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից եւ գործելու է մինչեւ 2023 թվականի հուլիսի 1-ը: Ավելին՝ մեզ հայտնի դարձավ, որ Շրջակա միջավայրի նախարարությունն անգամ ներմուծման համարգելված սննդիկի հավելիչով արտադրանքի ցանկ է սահմանել, իսկ ցանկում տեղ են գտել սննդիկ պարունակող ոչ էլեկտրոնային չափիչ սարքավորումներ՝ բարումներ, հիգրոմետրեր, ջերմաչափեր:

Սակայն դարձավ, որ ցանկում ներառված են նաև կոսմետիկական, դիմահարդարման կամ մաշկի խնամքի միջոցներ (բացի դեղամիջոցներից), օճառ, որպես օճառ օգտագործվող մակերության ակտիվ օգանական նյութեր եւ միջոցներ, սննդիկային լամպեր, սննդիկ պարունակող մարտկոցներ:

Ըստ ՇՄ հիմնավերման՝ սննդիկն ու սննդիկի միջազգությունները խիստ թունավոր են եւ վնասակար մարդու առողջության, վայրի բնության եւ էկոհամակարգերի համար, քանի որ սննդիկ ներթափանցումը մարդու օրգանիզմ հաճախ տեղի է ունե-



նում դրա գոլորշիների ներշնչման ժամանակ, որոնք հոր չունեն: Սննդիկի նույնիսկ փոքր քանակների ազդեցության հետեւանքով կարող են առաջանալ առողջական խնդիրներ եւ ծանր թունավորում: Սննդիկը թունավոր ազդեցություն է թողնում նյութային, մարտղական եւ իմունակարգերի, թոքերի, երիկամների, մաշկի եւ աչքերի վրա: Առողջապահության համաշխառային կազմակերպությունը սննդիկը դիտարկում է այս տասը հիմնական քիմիական նյութերի կամ միջազգությունների շարքում:

հանրային առողջության համար: Կոմմտիկ միջոցների, դիմահարդարման կամ մաշկի խնամքի միջոցների, օճառների, որպես օճառ օգտագործվող մակերութական օրգանական նյութերի եւ միջոցների ներուծումը կամ արտահանումը նախատեսվում է թույլատրել, եթե ներկայացվում է «Օճանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Սաբային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան գնահատման վերաբերյալ փաստաթուղթը:

ԱՅԽՈՒՅՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԱՆ

ՄԱՐՈ

ՈՍԻԿԱՆԵՐԻՆ Է ԿԱՆՉԵԼ

Հաղարծին գյուղի բնակչութեա Ասորամ Հայրաղեցյանը տեսական ժամանակ ահազանցում է Հաղարծին իրենց քաղամասում կոյուղու քացակայության, քաց հոսող, գարշահու կոյուղացրերի, հակասանքաներական ահավոր վիճակի մասին:

Դիլիջան համայնքի ավագանու անդամներից մեկը՝ Նարեկ անունով, որը Յաղարծինի աջակա թաղամասի բնակչէ, Ա. Յայրապետյանին հայտնել է, որ այդ խնդիրը կարելի է լուծել այդ թաղամասի բնակիչների կողմից որոշակի գումար հանգանակելով և Դիլիջանի համայնքապետարանի աջակցությամբ՝ բանվորներ, եռակցող, տեխնիկա տրամադրելով եւ այլն: Ասպարամը հայտնեց, որ դրա համար համայնքապետարանը պետք է ինժեներ, ճարտարապետ կամ չափագործ ուղարկեր, որպեսզի ճշտվեր կոյուղագիծ կառուցման աշխատանքի ծավալը եւ այդ թաղամասի բնակչիների կողմից ներդրվելիք գումարի չափը: Նարեկ անունով ավագանու անդամը Ա. Յայրապետյանին հայտնել է, որ ինքը խնդիրի վերաբերյալ խոսել է Դիլիջանի դիմակարը և Ասպարամը երեխայի հետ մտել է Նորա աշխատասենյակի:

Դիլիջան համայնքի ավագանու անդամներից մեկը՝ Նարեկ անունով, որը Յաղարծինի աջակա թաղամասի բնակչէ, Ա. Յայրապետյանին հայտնել է, որ այդ խնդիրը կարելի է լուծել այդ թաղամասի բնակիչների կողմից որոշակի գումար հանգանակելով և Դիլիջանի համայնքապետարանի աջակցությամբ՝ բանվորներ, եռակցող, տեխնիկա տրամադրելով եւ այլն: Ասպարամը հայտնեց, որ դրա համար համայնքապետարանը պետք է ինժեներ, ճարտարապետ կամ չափագործ ուղարկեր, որպեսզի ճշտվեր կոյուղագիծ կառուցման աշխատանքի ծավալը եւ այդ թաղամասի բնակչիների կողմից ներդրվելիք գումարի չափը:

-Դուք ո՞վ եք, ծեղնից ինչ եք ներկայացնում, որ եկել եք, ռազմավարական օրյեկտում պատերազմական իրավիճակում կարդեր եք հրապարակում, իմ քոյրիկին եք նկարել, որը հետարկություն է համար համայնքապետարանը պետք է ինժեներ, ճարտարապետ կամ չափագործ ուղարկեր, որը համայնքապետարանի աշխատողների հանգստի համար սուր է մատուցում, - հարձակվել է համայնքապետը:

-Բայց ո՞վ է ծեր քոյրիկը, հարցուել է Ասպարամը:

-Իմ քոյրիկը իմ գործավարն է, ասել է

Դ. Սարգսյանը:

Նա «հազմավարական օրյեկտ» համայնքապետարանում «պատերազմական իրավիճակում» նկարելու համար զանգահարել է սոտիկանության Դիլիջանի բաժին, որպեսզի աշխատակիցներ գան համայնքապետարան: Ասպարամը համայնքի նեկավարին տվել է իր հեռախոսը՝ ասելով, որ նա կարող է զննել այն, այստեղ ոչ մի վտանգավոր նկար չկա, սակայն համայնքի դեկավարը հրաժարվել է:

**ՈՍԿԱՆ ՍԱՐԳԱՅԱՆ
Տավու**

● Անցած 1 օրվա ընթացքում Յայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ճՏՊ. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմանական վնասվածքներ:

ՀԱՍՏԱԿՈՒԹՅՈՒՆ


**ՀԱՐՑ. Ի՞նչ է Տեխնիկական կանոնակարգը
Նվեր Մինասյան (32 տարեկան)**



ՊԱՏԱՌԻՄ. Տեխնիկական կանոնակարգը փաստաթուղթ է, որի ընդունվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան, ՀՀ օրենքով կամ ՀՀ կառավարության որոշմամբ, որով սահմանվում են արտադրանքի բնութագրերի և (կամ) արտադրանքի հետ կապված գործընթացներին, արտադրական եղանակներին՝ ներաշյալ կիրավող վարչական դրույթներին ներևայացվող կատարման և կիրարման համար պարտադիր պահանջներ, ինչպես նաև արտադրանքի ներմուծման և շուկայահանում պայմաններ: Այն կարող է ներառել նաև արտադրանքի, գործընթացի կամ արտադրական եղանակի նկատմամբ կիրավող հասկացություններ, պայմանանշաններ, փաթեթավորման, մակնշաման և պիտակավորման պահանջներ, սանհիտարական, բուսասանհիտարական, անասնաբուժասանիտարական նորմեր, ինչպես նաև արտադրանքի գրանցման մասին պահանջներ («Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՕ, հոդված 2, մաս 1, կետ 2):

ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին

«ԺՈՂՈՎՐԴԻՐԴ». Սևնդամեթերքի հետ շփվող պոլիմերային եւ այդ հիմքով պլաստմասսայի արտադրանքների տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) գործողությունը տարածվում է արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանուի ծածկագրերին համապատասխան՝ բացառապես պոլիմերային նյութերից կամ բացառապես պոլիմերային նյութերից կամ դրանց հիմքով պլաստմասսայի նյութերից պատրաստված, սևնդամեթերքի հետ շփման համար նախատեսված պլաստմասսայի արտադրանքների վրա:



Է՞՞՞ ՆԱԻՐԻ ՀՈՎՐԱՆԻՍԱՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչու՞ է իրականացվում օսարեւելյան բուհերից տեղափոխությունը:

Լիանն Սարգսյան (19 տարեկան)



ՊԱՏԱՌԻՄ. Օսարեւելյան պետական եւ ըստ մասնագիտությունների հավատարմագրված, կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններից Հայաստանի Յանրապետության բուհեր ուսանողների տեղափոխությունն իրականացվում է վճռորոշ ուսուցման սկզբունքով: Օսարեւելյան բուհ միջավետական համաձայնագրերով ուսման գործողված եւ առողջական վիճակի կամ ուսման գործընթացը խոչընդոտող այլ անհարաբերություն կանգամանքների պատճառով Հայաստանի Յանրապետություն վերադարձող ուսանողները, ընդունող բուհի ռեկտորի առաջարկությամբ եւ նախարարության համաձայնությամբ, ուսուցումը կարող են շարունակել անվճար սկզբունքով:

**ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի եւ սպորտի նախարարություն**

«ԺՈՂՈՎՐԴԻՐԴ». ԱՊՀ մասնակից պետություններում, համաձայն ազգային օրենսդրության եւ միջավետական (միջազգային կամ համաձայնագրերի, կարող են ստեղծվել բազային կազմակերպության մասնաճյուղեր եւ ներկայացնություններ:

Կենտրոնի՝ որպես բազային կազմակերպության գործունեության դադարեցման մասին որոշումն ընդունվում է ԱՊՀ պետությունների կառավարությունների դեկավարների խորհրդի կողմից՝ սույն կանոնակարգ հաստատած ԱՊՀ մասնակից պետությունների մեջի առաջարկությամբ, կամ կրթության ոլորտի համագործակցության ԱՊՀ մասնակից պետությունների խորհրդի առաջարկով՝ ըստ սահմանված կարգի:

**«ԺՈՂՈՎՐԴԻՐ» օրաթերթում իրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը.
«Ճարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:**



ՏԵՂԵՎԱՇՎԱԾ

ԼՈՒՐ ԿԱՌՈ

Լուսանկարն արվել է Երեւանում



Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Սրտարանական հիվանդանոցի մոտ այրվել է «ՎԱԶ 2106» մակնիշի ավտոմեքենան: Այս պատկանում է Երեւանի բնակիչ 79-ամյա Աղվան ճ.-ին: Բարերախտաբար, տուժածներ չկան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմանով» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բիլց-ՍԵՐԻԱ» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքում՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանոնադատնակ ձեր բարձրացրած բոլոր ինֆորմացիաների:

ԱՌԱՋԱՐԿ

հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կիասնի ձեր նախնականի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ու.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ» թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Արքայի 22/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համար՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 11.08.2022

Գլխավոր խմբագիր՝
ՔԱՆՈ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՇ» տպարան ՍՊԸ իրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ
չեն վերադարձվում, Գ նշանվ կութերը գովազդային
իրապարակներ են, որոնց համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում: